



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հուլիսին /վերլուծություն/

2009թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14051 գործարքներ, որոնց քանակը 2008թ. հուլիսի համեմատ նվազել է 5.8%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 1.9%-ով:

2009թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3758 օտարման գործարքների 78.3%-ը կազմել են առուվաճառքները, 20.7%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. հուլիսին, 2009թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 6.7%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ՝ 27.9%-ով:

2009թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. հուլիսին, 2009թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.9%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ՝ 5.7%-ով:

2009թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2008թ.	հուլիս 2009թ.	հունիս 2009թ.
Կենտրոն	494800	453500	462800
Արաբկիր	422300	346800	350400
Քանաքեռ-Զեյթուն	311000	268300	271700
Նոր-Նորք	284500	217500	222600
Ավան	276000	220700	225700
Էրեբունի	281000	240400	243300
Շենգավիթ	286000	232300	235500
Դավթաշեն	300500	248100	250900
Աջափնյակ	282500	230400	235600
Մալաթիա-Սեբաստիա	271600	213600	218600
Նուբարաշեն	158000	136200	134700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>306200</b>	<b>255300</b>	<b>259300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հուլիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հունիսի համեմատ նվազել են 1.5%-ով:

2009թ. հուլիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 332 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. հունիսի համեմատ աճել է 1.8%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ նվազել՝ 22.1%-ով:

2009թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2008թ.	հուլիս 2009թ.	հունիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	139500	131200	127200
	Ապարան	34500	43600	44000
	Թալին	43700	47400	48000
Արարատ	Արտաշատ	103000	84400	87400
	Մասիս	132000	115900	120800
	Վեդի	81200	86700	85100

	Արարատ	62100	86500	89900
Արմավիր	Վաղարշապատ	170900	161200	166800
	Արմավիր	122300	112800	117500
	Մեծամոր	84400	77300	76000
	Սևան	98000	83600	87200
Գեղարքունիք	Գավառ	49600	44400	46400
	Մարտունի	68800	81300	80000
	Վարդենիս	32700	33600	33200
	Ճամբարակ	16200	19200	19200
	Վանաձոր	97200	90200	93000
Լոռի	Ստեփանավան	47500	54300	53500
	Մայիտակ	62500	75100	73800
	Ալավերդի	32200	32500	33400
	Տաշիր	32100	35200	34800
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	13900	13800
	Արմավիր	176000	139600	143500
Կոտայք	Նոր Հաճն	132100	133300	138400
	Բյուրեղավան	109200	91000	91900
	Եղվարդ	122400	119200	119200
	Հրազդան	70200	59700	61600
	Ծաղկաձոր	157000	180300	182300
	Զարենցավան	94400	83900	87200
	Գյումրի	104600	104000	107200
Շիրակ	Արթիկ	56900	54800	55100
	Մարալիկ	27300	29600	30800
	Գորիս	109000	127100	124600
Սյունիք	Կապան	91500	107500	111100
	Միսիան	76000	86800	87600
	Մեղրի	46500	55000	54200
	Ագարակ	29300	32800	33100
	Քաջարան	50500	57700	57900
	Դաստակերտ	7000	8000	8000
	Վայք	75700	70500	71200
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	98100	107900	109300
	Զերմուկ	125800	112700	113900
	Դիլիջան	97500	90600	93300
Տավուշ	Իջևան	126000	132400	130500
	Բերդ	39700	42500	43100
	Նոյեմբերյան	30100	33600	34000
	Այրում	21100	24000	24000

2009թ. հուլիսին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հունիսի համեմատ նվազել են 1.3%-ով:

2009թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 376 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 101, մարզերում միասին վերցրած՝ 275: 2009թ. հուլիսին, 2009թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 10.9%-ով, ընդ որում Երևանում՝ 12.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.4%-ով: 2008թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 27.7%-ով, ընդ որում Երևանում՝ 10.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 32.4%-ով:

2009թ. հուլիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2008թ.	հուլիս 2009թ.	հունիս 2009թ.
Կենտրոն	501400	484000	493000
Արաբկիր	434900	373500	382000
Քանաքեռ Զեյթուն	319100	289700	298000
Նորք Մարաշ	293900	290600	299500
Ավան	282600	241100	251300
Էրեբունի	285800	266500	273000
Շենգավիթ	290000	253300	261300
Դավթաշեն	308000	273300	281000
Աջափնյակ	291200	260700	269500
Մալաթիա-Սեբաստիա	278400	242500	252000
Նուբարաշեն	161700	146700	152300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>313400</b>	<b>283800</b>	<b>292100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հուլիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հունիսի համեմատ նվազել են 2.8%-ով:

2009թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2008թ.	հուլիս 2009թ.	հունիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	143800	133500	135200
	Ապարան	37800	46700	47900
	Թալին	47900	51200	52500
Արարատ	Արտաշատ	105100	92000	95100
	Մասիս	138700	137000	130500
	Վեդի	91100	91100	93300
	Արարատ	66200	90500	91800
Արմավիր	Վաղարշապատ	176000	175000	178800
	Արմավիր	124700	122900	126600
Գեղարքունիք	Սևան	100000	91900	95600
	Գավառ	51400	52700	54800
	Մարտունի	76400	83600	84100
	Վարդենիս	34800	36300	38000

	Ճամբարակ	20800	21700	22500
Լոռի	Վանաձոր	100800	94900	97400
	Ստեփանավան	52400	56700	58100
	Սպիտակ	66800	77400	77700
	Ալավերդի	34600	34900	35600
	Տաշիր	35500	37600	37600
	Թումանյան	10200	10000	10400
	Շամլուղ	6900	7400	7400
	Ախթալա	15800	18200	18200
Կոտայք	Աբովյան	189000	150200	153400
	Նոր Հաճն	136700	139600	143400
	Բյուրեղավան	111200	97500	102500
	Եղվարդ	128300	121600	127400
	Հրազդան	74600	64900	67700
	Ծաղկաձոր	245800	290700	288200
	Չարենցավան	98900	90000	92000
Շիրակ	Գյումրի	106500	110900	112300
	Արթիկ	59400	58000	60100
	Մարալիկ	32000	33200	34700
Սյունիք	Գորիս	114700	129100	128900
	Կապան	94200	113300	116200
	Սիսիան	78200	90800	93500
	Մեղրի	50000	57200	58600
	Ագարակ	32600	35700	35700
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	80700	73100	75100
	Եղեգնաձոր	103600	111600	115700
	Ջերմուկ	86500	110800	110400
Տավուշ	Դիլիջան	103800	101300	104300
	Իջևան	128800	133800	136600
	Բերդ	41100	44800	46900
	Նոյեմբերյան	35600	35700	36500
	Այրում	22800	25800	25800

2009թ. հուլիսին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հունիսի համեմատ նվազել են 1.9 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1192 միավոր /750.33 հա/ հողեր, որից Երևանում` 83 միավոր /7.82 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, օտարվել են 21 միավոր /1.80 հա/ հողեր, որից Երևանում` 14 միավոր /1.04 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 512 միավոր /671.57 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.42 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 477 միավոր /50.85 հա/, որից Երևանում` 65 միավոր /4.03 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 179 միավոր /24.26 հա/, որից Երևանում` 12 միավոր /3.14 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 19 միավոր /2.02 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.23 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 3 միավոր /1.61 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.03 հա/ :

2009թ. հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1059 միավորի /580.33 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 75 միավոր /7.57 հա/, նվիրատվության գործարքներ՝ 125 միավորի /169.46 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.25 հա/ և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի /0.54 հա/:

Հանրապետությունում 2009թ. հուլիսին, 2008թ. հուլիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 48.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 46.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 49.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 5.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 150.38 հա, որից 137.50 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.3%-ը կամ 300 գործարքներ /142.27 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 21 գործարքներ /2.70 հա/, իսկ 70.4%-ը կամ 746 միավորը /422.63 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 53 միավոր /4.86 հա/:

2009թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք /15.43 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Լան	0	0.00	0	0.00	16	1.46	5	1.25	4	0.42	2	0.23	42	2.33	5	1.87
Լազաճոտն	10	24.36	0	0.00	2	0.40	12	0.97	50	42.14	0	0.00	27	2.16	0	0.00
Արաստ	5	9.99	11	1.21	6	0.50	13	0.10	57	18.37	0	0.00	57	5.03	6	0.04
Ամավիր	15	42.34	1	0.001	0	0.00	8	0.28	39	78.25	0	0.00	46	4.99	3	0.13
Աղաթրունիք	1	0.64	0	0.00	8	0.88	2	0.10	21	43.79	0	0.00	8	0.63	0	0.00
Ուի	3	2.21	1	0.04	8	0.44	33	0.59	31	17.91	0	0.00	51	13.81	0	0.00
Ստայք	15	13.97	1	0.08	16	1.54	12	0.31	75	123.53	0	0.00	92	9.40	10	0.35
Ղակ	14	19.67	2	0.20	5	0.26	6	0.09	26	24.51	0	0.00	6	0.39	5	0.14
Ունիք	6	14.03	0	0.00	0	0.00	13	0.14	6	2.42	0	0.00	5	0.28	4	0.92
Այոզ Ձոր	12	1.78	0	0.00	9	0.73	11	0.04	47	8.01	0	0.00	3	0.24	2	0.10
Վլուշ	1	1.00	1	0.25	5	0.06	11	0.37	7	18.39	0	0.00	3	0.20	1	0.004
Ղամննր	82	129.99	17	1.78	75	6.27	126	4.24	363	377.74	2	0.23	340	39.46	36	3.55

Ստորև ներկայացվում է 2009թ. հուլիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների

քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	15	1.86	0	0.00	11	0.76	4	1.10	6	0.84	0	0.00	0	0.00	5	0.69	1	0.15
Արագածոտն	2	0.10	0	0.00	1	0.10	1	0.003	21	25.59	9	24.32	0	0.00	1	0.30	11	0.97
Արարատ	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	33	11.72	4	9.92	11	1.21	6	0.50	12	0.09
Արմավիր	3	0.011	1	0.001	0	0.00	2	0.01	20	42.46	14	42.19	0	0.00	0	0.00	6	0.27
Գեղարքունիք	1	0.18	0	0.00	1	0.18	0	0.00	10	1.44	1	0.64	0	0.00	7	0.70	2	0.10
Լոռի	1	0.09	0	0.00	0	0.00	1	0.09	44	3.19	3	2.21	1	0.04	8	0.44	32	0.50
Կոտայք	13	0.38	0	0.00	6	0.27	7	0.11	27	14.82	11	13.27	1	0.08	10	1.27	5	0.20
Շիրակ	5	0.183	0	0.00	3	0.18	2	0.003	22	20.04	14	19.67	2	0.20	2	0.08	4	0.09
Սյունիք	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	18	14.16	6	14.03	0	0.00	0	0.00	12	0.13
Վայոց Ձոր	2	0.006	0	0.00	0	0.00	2	0.006	30	2.54	12	1.78	0	0.00	9	0.73	9	0.03
Տավուշ	2	0.015	0	0.00	1	0.005	1	0.01	16	1.67	1	1.00	1	0.25	4	0.06	10	0.36
Ընդամենը	46	2.84	1	0.001	23	1.50	22	1.35	247	138.47	75	129.03	16	1.78	52	4.77	104	2.89

Հանրապետությունում 2009թ. հուլիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք /0.96 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. հուլիսին, 2008թ. հուլիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 69.7%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 57.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 70.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 73.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 79.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 61.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 23.1%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	24.32	68.1	1244.3	238.1	38	16.25	365.0	12000.0	4320.8
Ապարան						3	1.36	86.5	2727.3	525.5
Թալին						4	3.56	93.6	5494.5	475.0
Ծաղկահովիտ						3	20.88	79.5	1000.0	235.5
Արարատի մարզ										

Արտաշատ						28	7.65	335.1	10833.3	2057.0
Մասիս	4	9.92	76.7	2100.8	1043.5	8	1.94	200.0	11904.8	2925.8
Վեդի						16	7.12	207.0	10795.1	1815.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	24.69	55.2	600.0	418.4	21	12.88	294.3	9090.0	1130.5
Բաղրամյան	4	11.77	33.8	797.5	247.4	5	44.51	90.6	2561.1	635.5
Վաղարշապատ	3	5.74	5.6	40.6	28.5	13	20.86	444.4	11764.7	2695.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.64	102.4	102.4	102.4			199.8	1875.0	444.2
Ճամբարակ						5	4.38	60.5	953.3	235.5
Մարտունի								51.1	2850.0	562.8
Սևան						8	27.38	52.2	2134.8	230.3
Վարդենիս						8	12.03	41.2	2575.1	385.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.50	70.4	70.4	70.4	11	7.82	170.4	6424.2	1000.0
Գուգարք	1	0.71	114.1	114.1	114.1	3	0.79	234.6	6065.9	1072.2
Սպիտակ								250.0	5555.5	580.5
Ստեփանավան	1	1.00	210.0	210.0	210.0	2	3.15	90.6	1686.6	395.5
Տաշիր						15	6.16	45.3	1384.4	203.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	5.73	207.8	854.8	425.0	43	21.64	279.3	11942.7	4829.9
Եղվարդ	6	5.61	274.0	1211.9	636.5	29	99.93	174.4	11971.8	3342.5
Հրազդան	2	1.94	113.1	448.0	280.6	2	0.42	130.5	10256.4	1486.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	7.61	252.0	1693.1	474.6
Ամասիա						2	2.85	40.9	261.0	137.8
Անի	14	19.67	85.3	716.9	382.7	1	1.37	110.6	546.9	280.7
Աշոցք						11	11.05	58.5	215.8	123.5
Արթիկ						5	1.63	79.4	1428.6	228.0
Սյունիքի մարզ										
Գորիս	1	1.40	137.5	137.5	137.5			92.6	1023.2	458.3
Կապան	5	12.63	140.1	290.5	187.9	3	1.30	120.0	841.6	277.5
Մեղրի						3	1.12	193.0	3000.0	582.4
Միսիան								46.3	1977.4	290.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	1.78	67.5	986.0	316.5	34	6.73	125.0	10000.0	1485.0
Վայք						13	1.28	58.8	1430.7	500.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.37	213.3	3783.8	495.1
Իջևան						1	0.50	267.5	9454.5	1000.0
Նոյեմբերյան	1	1.00	149.8	149.8	149.8	4	17.52	46.7	7368.4	732.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						26	21560.7	130.7	22200.0	2570.0
Ապարան	1	3000.0	73.3	73.3	73.3	1	80.0	124.1	609.6	242.0
Թալին								63.2	1454.8	129.8
Ծաղկահովիտ								60.0	214.3	76.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	3	3000.0	532.0	533.0	532.3	11	9459.0	173.9	7140.3	892.0
Մասիս	3	2010.0	541.5	2995.6	2177.5	27	20471.0	187.5	25000.0	1220.0
Վեդի						18	17560.0	126.1	5000.0	660.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						13	11904.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան								100.0	833.3	172.3
Վաղարշապատ						33	38013.0	197.4	26528.4	1537.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	5	6000.0	183.3	183.3	183.3	5	4972.0	186.6	1084.3	432.2
Ճամբարակ								71.3	2286.2	125.4
Մարտունի	1	412.0	118.4	118.4	118.4	1	410.0	119.3	5000.0	273.0
Սևան	1	608.0	466.0	466.0	466.0	2	890.0	240.0	3110.4	206.0
Վարդենիս								72.5	987.2	142.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						5	5887.0	114.3	1388.9	185.5
Գուգարք	7	3401.0	124.4	5655.4	2328.0	3	1972.0	77.9	14083.3	693.5
Սյլիտակ	1	970.0	111.0	111.0	111.0	40	55730.0	104.9	1348.3	178.5
Ստեփանավան						3	74499.0	88.2	1666.7	135.0
Տաշիր								45.3	400.0	76.6
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	3	3010.0	182.5	3166.9	1177.6	47	50026.0	264.5	35353.5	2050.4
Եղվարդ	4	7305.0	226.0	243.4	228.7	37	35974.0	173.6	27000.0	2684.2
Հրազդան	3	2400.0	38.6	636.0	366.5	7	7569.0	117.7	34848.5	1350.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						5	3035.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	325.0	425.0	375.0			67.9	180.6	115.2
Աշոցք								40.8	144.0	59.1
Արթիկ						1	840.0	111.8	5000.0	216.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						4	1881.0	112.2	1700.0	280.0
Կապան						1	932.0	67.9	2638.9	222.0
Մեղրի								68.5	632.9	139.0
Սիսիան								123.5	875.0	156.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	3	2750.0	460.0	752.5	560.8	2	1730.0	96.7	7659.6	380.5
Վայք	6	4500.0	854.0	854.0	854.0	1	700.0	120.7	1448.3	146.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								75.8	810.0	93.4
Իջևան	3	478.0	165.0	1495.0	746.9	2	1316.0	74.1	14423.1	479.1
Նոյեմբերյան	1	100.0	600.0	600.0	600.0	1	720.0	125.0	1948.1	163.0

2009թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 5 գործարքներ 0.38 հա մակերեսով, ընդ որում, 4-ը՝ /0.23 հա/ Լոռու և 1-ը՝ /0.15 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1058 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 91.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. հուլիսին 2009թ. հունիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 23.2%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ՝ 0.9%-ով:

2009թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանների, 40 անհատական բնակելի տների, 405 հասարակական, 41 արտադրական նշանակության օբյեկտների, 391 միավոր /4905.64 հա/ հողերի և 126 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. հուլիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր՝ 0.18 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. հունիսի համեմատ նվազել է 59.3%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ՝ 52.2%-ով: 2009թ. հուլիսին հանրապետությունում վարձակալված 4905.64 հա հողերից 0.69 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4904.94 հա հողերի 1.46 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.13 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 3108.01 հա, որից 3107.73 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1613.76 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	7	13.38
Արարատ	3	170.00	84	89.18
Արմավիր	0	0.00	6	9.00
Գեղարքունիք	4	573.76	26	65.92
Լոռի	2	700.00	9	42.64
Կոտայք	0	0.00	17	12.06
Շիրակ	0	0.00	73	103.25
Սյունիք	6	170.00	34	2937.73
Վայոց Ձոր	0	0.00	5	11.05
Տավուշ	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>15</b>	<b>1613.76</b>	<b>261</b>	<b>3284.21</b>

2009թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1510 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հունիսի համեմատ աճել է 17.5%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ նվազել՝ 46.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.5%/, առանձնատների /20.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.2%/ և հողերի /12.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 778 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հունիսի համեմատ աճել է 32.3%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ նվազել՝ 29.7%-ով:

2009թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 337.88 հա հողեր, որից 14.60 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 67.5%-ը կամ 228.09 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.24 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 105.34 հա, որից 102.68 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. հուլիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 85 գործարքներ, որից 66-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 83.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 7.1%-ն՝ անհատական բնակելի տների, 8.2%-ը հասարակական նշանակության օբյեկտների և 1.2%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 25.0%-ով, ընդ որում Երևանում՝ 32.0%-ով, մարզերում՝ 5.6%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ նվազել է 71.9%-ով, ընդ որում Երևանում՝ 64.5%-ով, մարզերում՝ 83.6%-ով:

2009թ. հուլիսին հանրապետությունում հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2009թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2044 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. հունիսի համեմատ նվազել է 26.6%-ով, իսկ 2008թ. հուլիսի համեմատ՝ 10.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.1%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***